ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/0052/02/25 | ք. Երևան
10 Հունվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության՝ «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության տնօրենի՝ ««ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ» 25.12.2024թվականին հրապարակված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել ««ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ» 25.12.2024թվականին հրապարակված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության՝ «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության տնօրենի՝ ««ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ» 25.12.2024թվականին հրապարակված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.«ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել ««ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ» 25.12.2024թվականին հրապարակված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2025.01.10 13:07:54 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am